ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2023 թվականի N 226 - Ա

«ՏԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ՆՈՐԱՇԵՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022թ. փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված հավելվածի N 1-ի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հունիսի 19-ի N 02/09.3/20904-2023 և ՀՀ առողջապահության նախարարության 2023 թվականի հունիսի 16-ի ՎԳ/05/14116-2023 գրությունները.

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել՝

1.«Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

20.06.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. հունիսի 20
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի հունիսի 20-ի
N226-Ա որոշման

ԿԱԶՄ

«Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի.

1.Նունե Գևորգյան – Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),

2.Մերի Գանդալյան - Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար),

3.Մուշեղ Կոստանդյան - Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ,

4.Նորա Փահլևանյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ (համաձայնությամբ),

5.Գաբրիել Թեփելիկյան - Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հանրային առողջապահության արտակարգ գործառնական կենտրոնի պատասխանատու (համաձայնությամբ),

6.Նարինե Գրիգորյան - «Ազգային բժշկական պալատ մասնագիտական միություն» ՀԿ-ի անդամ (համաձայնությամբ),

7.Մարգարիտա Մարգարյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ):

20.06.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝

Է.Մարտիրոսյան